

ԱՀԴ 2015Բ: ՇԱԽՄԱՏ_3-4

Ձեր խնդիրն է պարզել շախմատային թագավորը $(x1, y1)$ վանդակից մեկ քայլով կարող է հասնել $(x2, y2)$ վանդակ, թե՞ ոչ:

Մուտքային տվյալներ.

Մուտքի միակ տողում տրված են $(x1, y1)$ և $(x2, y2)$ շախմատային վանդակների կոորդինատները, մեկը մյուսից անջատված բացատանիշով: Ընդ-որում $x1, x2$ լատինական այբուբենի փոքրատառեր են, իսկ $y1, y2$ բնական թվեր են, որոնք չեն գերազանցում 8-ը:

Ելքային տվյալներ.

Ելքի միակ տողում պետք է արտածել YES, եթե շախմատային թագավորը $(x1, y1)$ վանդակից մեկ քայլով կարող է հասնել $(x2, y2)$ վանդակ և NO` հակառակ դեպքում:

Օրինակներ.

N	stdin	stdout
1	d4 e5	YES
2	a1 h8	NO